ԷՋՄԻԱԾԻՆ

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

**Մայիսի 2-ին, կիրակի.—Կարմիր կիրակի.** Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Երեկոյան ժամը 18-ին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստ:

*

* *

**Մայիսի 3-ին, երկուշաբթի.**—Այսօր Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ Ադիս-Աբեբա, Եգիպտոս և Իրաք հովվական այցելության մեկնեց տ. Կոմիտաս եպս. Տեր-Ստեփանյանը:

Հանուն Վեհափառ Հայրապետի տ. Կոմիտաս եպիսկոպոսը Ադիս-Աբեբայում կըմասնակցի նաև Եթովպիայի քույր եկեղեցու նորընտիր պատրիարք Ն. Սրբություն Աբունա Թեոֆիլոսի գահակալության հանդիսությանց:

*

* *

**Մայիսի 4-ին, երեքշաբթի.**—Այսօր Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ է ժամանում Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի միաբան, Ժառանգավորաց վարժարանի տեսուչ և պատրիարքարանի դիվանապետ տ. Շահե եպս. Աճեմյանը:

Մայր տաճարում իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո տ. Շահե սրբազանը ընդունվում է Վեհափառ Հայրապետի կողմից:

*

* *

**Մայիսի 6-ին, հինգշաբթի.**—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունն ու դասախոսական կազմը մեկօրյա պտույտի մեկնեցին Սաղմոսավանք: Ճանապարհին ուսանողները այցելեցին Մուղնու ս. Գևորգ և Հովհաննու վանքերը:

*

* *

**Մայիսի 6-ին, հինգշաբթի.**—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, Մայր Աթոռի սարկավագները Վեհարանում, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ, հանդիպում ունեցան տ. Շահե եպս. Աճեմյանի հետ, որը, հաղորդելով ամեն. տ. Եղիշե սրբազան պատրիարքի ողջույնը, պատմում է վերջերս ս. Երուսաղեմում ազգային մեծ բարերար պրն. Ալեքս Մանուկյանի իշխանական նվիրատըվությամբ կատարված Ժառանգավորաց վարժարանի նոր շենքի հիմնարկեքի հանդիսությանց մասին:

*

* *

**Մայիսի 9-ին, կիրակի.—Տոն երևման ս. Խաչի.**

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Օշին վրդ. Նիկոլյանը և «Հայր

մեր»-ից առաջ քարոզում՝ «Հաստատք քո կե-ցուցին զքեզ» բնաբանով:

*
* *

**Մայիսի 10-ին, երկուշաբթի.**—Այսօր Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրա-ժեշտ առնելով, ս. Երուսաղեմ է մեկնում տ. Շահե եպս. Աճեմյանը:

*
* *

**Մայիսի 12-ին, չորեքշաբթի.**—Ժամը 12-ին Սովետական Միությունում Մեծ Բրիտա-նիայի արտակարգ և լիազոր դեսպան սըր Դունքկան Դանկեն Վիլսոնը իր հարգելի տիկնոջ հետ այցելում է Մայր տաճար, ե-կեղեցական արվեստի թանգարանը և ապա Հայոց Հայրապետին:

Վեհարանում Հայոց Հայրապետի և Մեծ Բրիտանիայի մեծահարգ պրն. դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

*
* *

**Մայիսի 15-ին, շաբաթ.**—Այսօր, ժամը 19-ին, Վեհարանում Հայոց Հայրապետի նախագահությամբ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

**Մայիսի 16-ին, կիրակի.**—Մայր տաճա-րում ս. պատարագ է մատուցում տ. Հով-հաննես քհն. Մարուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Զօրութիւն սուրբ Խաչի Քո Քրիստոս, որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր ուխտավորա-բար ս. Էջմիածնում գտնվող պոլսահայ հա-վատացյալներ, որոնք հավարտ ս. պատա-րագի Վեհարանում ներկայացան Հայոց Հայրապետին և աջահամբույրով ստացան Նրա օրհնությունները:

*
* *

**Մայիսի 20-ին, հինգշաբթի.—Համբար-ձումն Քրիստոսի.**

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-ցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը:

Ս. պատարագի վերջում Իջման ս. սեղանի առաջ կատարվում է հայրապետական մաղ-թանք՝ «Յիշատակ փոխադրութեան Հայրա-պետական Աթոռոյն հայոց ի Սսոյ ի ս. Էջ-միածին, յամի Տեառն 1441»:

Օրվա տոնի հոգևոր նշանակության և Հայրապետական Աթոռի փոխադրության ե-կեղեցական իմաստի մասին քարոզում է տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը՝ «Համբարձաւ Տէրն մեր յերկինս» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Մայիսի 20-ին, հինգշաբթի.**—Ժամը 16-ին Վեհարանում Վեհափառ Հայրապետին են այցելում Կիևից ժամանած երկու մասնագետ գիտնականներ, տեր և տիկին Անարոն Ռուտսկին և Վալերիան Օսինսկայան:

Հարգելի գիտնականներին ուղեկցում էր պրոֆ. Ա. Գալստյանը:

Հայոց Հայրապետի և հարգելի գիտնա-կանների միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

*
* *

**Մայիսի 23-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղ-կազարդ.**

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-ցում տ. Գևորգ վրդ. Սերայդարյանը և քա-րոզում՝ «Քում ամենազօր և հրաշալի Համ-բարձմանդ Քրիստոս Աստուած մեր, երկիր պագանեն զօրք հրեշտակաց» բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

**Մայիսի 24-ին, երկուշաբթի.**—Այսօր հո-գևոր ճեմարանում սկսվում են 1970—1971 ուսումնական տարվա ամավերջի քննու-թյունները, որոնք կտևեն մինչև հունիսի 10-ը: